## 15. ԹԱԳԱՎՈՐԻ ԵՐԵՔ ՏՂԱՆԵՐԸ

Կէղնի չի էղնի մե թագավորմ կէղնի։ Էդ թագավորը կունենա ֆրեք տղա։ Իրան մահվան մոտիկ, կտակ կէնե՝ մենձին թուրն, միջնակին լավ ակմ, պզտկին էլ թանգ գնանոց ակմ։ Էս էրկու ակն էլ իրեն ձեռքովը դնե կը խազնան մեռհրե կը։ Իրան մահվանեն ետև խազնի դուռը կը բանան օր ակերը չկա։ Մեկ ախպերը մեկելին կըսե՝ դու ես գողցե, մեկելը էսօր կըսե՝ դու ես գողցե, իրար հետ հակառակին կը։ Բանը կը հասնի գանգրտի։

Իրեք ախպերը իրար հետ կէրթան մե ուրիշ թագավորի քով գանգատ։ Ճամփուն մեջ, էրթցած տեղը ախպրներուն մեկը կըսե.— Էստից դավա է անցե։

Մեկել ախպերը կըսե.—Էդ դավի օրթայի առկեն կոտրած է էղե։

Երրորդն էլ կըսե.— Մե աչքն էլ քոռ է էղե։

Դավի տերը ռաստ գուքա, էսոնց հարցնե կը, թե. «Իմ դավես տեսե՞ր եք»։

Մեկը կըսե.— Քու դավիդ աչքը քո՞ռ էր։

Մեկելն էլ կըսե.— Օրթայի առկեն ընկա՞ծ էր։

Դավի տերը կըսե.— Հա՛, ըսել է դուք եք իմ դավի գողը, օր էդպես ամեն բան գիտեք։ Տվեք, իմ դավես։

Ախպոր մեկը կըսե.— Վո՞վ պըտի էղնի էդոր դավի գողը։

Մեկել ախպերը կըսե թե.— Վով է օրա, բոյը կարճ է։

Մեկելն էլ կըսե թե.— Ինքը քյոսա է։

Մեկել ախպերն էլ կըսե թե.— Անունն էլ Մուսա է։

Դավի տերը էդոնց յախեն կը բռնե, թե.— Իմ դավիս յա դուք եք գողցե, յա ձեր ընկերը, օր էսպես տեղյակ դիտեք։

Բռնե կը յախաներեն տանի կը թագավորի քովը գանգատ։

Թագավորը կը հրամայե օր, էրթան բազար, ինքը կարճ, երեսը քյոսա, անունը Մուսա մարդմ դտնին, դավան առնին տան տիրոջը։ Էդպես էլ կէրթան, էդպես մարդմ կը դտնին, ինքը ղըսա[1], երեսը քյոսա, անունը Մուսա, բռնեն կը յախան, գողին տանին կը թագավորի քովը։

Քյոսան բերե դավին կուտա էդոնց, հոգին կազատե։

Գուքան թագավորին կըսեն, թե էն թավուր մարդմ գտան, դավեն առան տվին տիրոջը։

Թագավորը մաթ կտրած կը մնա, հարցնե կը էդ տղոցը, թե.— Դուք ինչե՞ն իմացաք, թե գողը էդ մարդն է, կամ ինչե՞ն իմացաք օր էդտից դավա է անցե, յա դավի ակռեն ընկած է, աչքը քոռ է։

Մեկն ըսեց.— Աչքը քոռ էղնելը էնտից իմացանք, օր ճամփոռ մե կողմեն արծեր գնացեր էր։

— Ինչե՞ն իմացաք օր ակռեն ընկած է։

Կըսեն.— Էնտից իմացանք օր ընկած ակռի խոտը մնացեր է, մեկելը արծեր է։

— Է՞, քյոսա էղնելը ինչե՞ն իմացաք,— հարցնե կը թագավորը։

— Էդիկ մեր իմաստութենը մեզի իմացուց։

Թագավորը շատ ուրախացավ օր էդպես իմաստուն տղեք էկեր են քովը, էլ չը հարցուց, թե ինչի՞ են էկե։

Իրան մարդոցը հրամայեց օր տանին հաց ուտեցնեն։ Մարդոց թամպա էրավ, օր դռան հետևը պահ մտնին, անկաջ էնեն, թե ի՞նչ կը խոսին իրան՝ թագավորի մասին։

Մենձ ախպերը ըսավ թե.—Տղեք, էս հացեն մեռելի ֆոտ գուքա։

Միջնակ ախպերը ըսավ թե.— Մսեն էլ շան ֆոտ գուքա։

Պղտի ախպերն էլ ըսավ.— Ինքն էլ բոզի տղա է, ինչ պտի էղնի։

Մարդիկը գնացին թագավորին պատմեցին, ինչ օր իմացեր էին։

Թագավորը հրամայեց, օր էրթան իմանան, թե հացը որ գեղեն է էկե, որ արտեն է քաղվե։

Գնացին էն գեղը, էն արտեն օր էդ հացը բերեր էին, իմացան օր էդ արտի մեջը մե մարդմ են սպանե ու թաղե։ Գուքան գիմացը-

---

[1] Դարձ (Ս. Բ.)։

նեն թագավորին, օր ղորթ, էդ արտի մեջը մեռած է թաղած էղե։

Թագավորը կըսե.— Գնացեք իմացեք, թե էն օշխարը ուրդից է բերած։

Կէրթան օշխարի տիրոջը կը գտնին, դիմանան օր էդ օշխարը դառ իքյան մերը մեռած է էղե, շան լակոտի հետ շան ծիծ է ծըծե։

Էդիկ էլ օր գնացին թագավորին ըսին, թագավորը թուր կապեց. գնաց մորը վրա, թուրը քաշեց թե.— Քեզի պիտի սրպանեմ, ղորթն ըսա՝ ես ո՞ւմից եմ էղե։

Մերը վախեցավ տղեցեն, ըսեց թե.— Քու հերդ կռիվ էր գնացե, էս ինչ մեծավորը էկավ կռվեն, քեզի էն մեծավորեն եմ առե։

Եդ դառցավ թագավորը էկավ իրա թախտը նստավ, շատ ուրախացավ, օր էսպես իմաստուն տղեք իրեն պատահեր են։

Էքսի օրը թագավորը ըսավ օր էրթա պտի ավղուշի։ Ելավ շատ ձիավորներով, էդ տղեքը հետը գնացին ավի։

Ման գալով, ման գալով գնացին մե էնպես տեղմ դյուշ էղան, օր նյա ջուր կար, նյա ծառ։ Մութը ընկավ, չատրրները զարկին, նըստան։ Թագավորի չատրրը զորքի չատրրեն կես վերստ հեռու զարկին, էս տղոց չատրրներն էլ էդ չատրրի կողքերը, իրարմենե քիչմ հեռու։

Թագավորը ըսավ էս տղոցը թե.— Էս գիշեր ամեն մեկդ իրեք սհաթ ղարաուլ պիտի քաշեք։

Մենձ ախպերը իրեք սահաթ ղարաուլ քաշեց, գնաց միջնակ ախպորը ձեն տվեց, թե.— Ել, քու սըրեդ է, դու ղարաուլութեն քաշե։

Էնիկ էլ իրեք սահաթ բաքլայեց, գնաց պզտի ախպորը ձեն տվեց։

Պզտի ախպերը ղարաուլ քաշած տեղը մտածեց թե. «Թագավորի գլոխը ինչ պիտի գա» ըսավ. «Օ, մեծ փորձութեն պտի գա», ու գնաց չատրրի հետևի կողմը, տեսավ օր մե ահագին վիշապմ էկեր է օր չատրրը պիտի փաթթե, թագավորին վնասե. թուրը քաշեց, զարկեց վիշապին, մեջեն էրկու կտոր էրավ։ Ետև էլի միտք էրավ օր, ինքն օր տեյմոր էդ իրեք սահաթը խոսի, ամենքին շատ վնաս կը պատահի, արնոտ թուրը ձեռքը մտավ թագավորի չատրրը։ Բիրտան, թուրը սրբած տեղը, թագավորը աչքը բացեց տեսավ, թուրը ձեռքը սրբե կը, իմացավ թե իրան սրպանե պտի։

Հարցուց թե.— Որդի,— ես քեզի ի՞նչ եմ էրե, օր դու ինձի սրպանել դուզես։

Տղան ձեն չը հանեց։ Թագավորը դրսի ղարաուլներուն կանչեց, ըսավ.— Տարեք էսոր դրեք նաբախտ։

Թագավորը ինքն իրան միտք էրավ, թե. «Ակյար էսոր մեկեն իմեկ սպանել տամ, ախպըրտիքը իմաստուն մարդիկ են, ինձի վրա դատ կը բանան, յավաշ, իրանցեն վճիռքը առնիմ, իրենց ախպորը իրենց վճռովը սըպանեմ»։

Կանչեց մենձ ախպորը, ըսավ.— Մե ծառամ օր իրան աղային վրա սուր հանե, էնոր պատիժը ի՞նչ կը վճըռես։

— Արժան է էնոր կաշին քերթես, գյոքսինը կոնակը գցել, կոնակինոր գյոքսին, էդպես սըպանես։

— Արժա՞ն է,— հարցնե կը թագավորը։

— Արժան է,— կըսե տղեն։

Թագավորը կրկին կը հարցնե.— Արժա՞ն է։

— Արժան է,— կըսե տղեն։

Վրա իրեք անգամ էլ հարցնե կը.— Արժա՞ն է։

Վրա իրեք անգամին օր հարցնե կը, թագավորի տղեն մտածե կը թե՝ չէղնի՞ թե ախպերը բանմ էրած ըլլի, կաշե օր ախպերը չի էրնա, միտքը կը բացվի, կըսե.

— Թագավոր,— կըսե,— քեզի պես, թագավորի պես մեկը, որսի էր հ՚ելե, էնպես մե տեղ ընկավ, օր նյա՛ ջուր կը գտնվիր, նյա ծառ կը գտնվիր, քարափներու մեջը ընկավ մնաց։ Շատ ծառվըցավ, իրեն մարդոցը ըսավ թե. «Շատ ծառավ եմ, փնտռեք ինձի համար ջուր գտեք»։ Մարդիկը գնացին որ յան ղարնըվան, չը կրցան ջուր գտնին։ Գիշերը առանց ջուր խմելու թագավորը մնաց տոր լուս։ Լուսը բացվավ, արեգակը զարկեց, ինքը հ՚ելավ, մե սիրելի թութակ ուներ, օր միշտ իրան ձեռացը վրա ման կածեր, էնով կը մխիթարվիր, առավ ձեռացը վրա, գնաց իրեն համար ջուր գտնելու։ Ման էկավ, էկավ, տեսավ օր մե ղայալըղեմ մե ջուրմ կաթե կը։ Գնաց մոտիկ, իրան օսկի թասը հանեց, էդոր տակը բռնեց, կաթ-կաթ լցվավ թասը, ուզեցավ խմել, թութակը թևով զարկեց՝ թափեց, չը թողեց խմելու։ Թութակ,— ըսավ թագավորը,— էս ի՞նչ վնաս ինձի տվիր. կրկին բռնեց թասը էն կաթիլի տակը, լցվելու մոտիկ էր, էլի թութակը թևը բացեց, զարկեց թափեց։ Թագավորի հերսը ելավ, թութակի գլոխը զարկեց կտրեց, ելավ քարափեն վեր, օր էդոր գյոզան գտնի, էդու ջրեն խմե։ Հ՚ելավ, տեսավ օր մե ահագին վիշապմ էդտեղ սատկեր է, էդոր եղն է դուքա քարափեն կաթե կը։ Թագավորը ձեռները զարնե կը ծնկներուն թե. «Վա՜յ թութակ դու չթողիր օր ես խմեի մեռնեի, ես քեզի սըպանեցի»։

Ետև դառնա թագավորին կըսե.— Թագավոր, եթե դու էլ առանց

քննության քու ծառայիդ վնասես, հ'ետև էնոր ցավը քու սրտեդ չի հ'ելնի։

— Շնորհակալ եմ,— կըսե թագավորը,— գնա հ'ըռահաթե, ես էլ քիչմ հ'ըռահաթիմ։

Թագավորը քիչմ ֆառայցավ, գլոխը դրեց բարձին, քիչմ քնավ։

Զարթավ, ըսավ.— Վայ, էնիկ իմ վրա սուր քաշե,— կանչեցեք,— կըսե,— միշնակ ախպորը։

Կանչեցին, թագավորն ըսավ.— Մե ծառամ օր իրեն աղային սուր քաշե սրպանելու, էնոր պատիժը ի՞նչ է։

— Մաս-մաս կտրտել, էնպես կյանքը վերջացնել, թագավո՛ր,— ըսավ տղեն։

— Արժա՞ն է էդպես տղային, էդպես սրպանել։

— Արժան է,— կըսե տղեն։

— Արժա՞ն է,— հարցընե կը իրեք անգամ։

Թագավորի տղեն կասկածի գընկնի, թե. «Չըլլի՞ իմ ախպորս համար ըլլի էդ վճիռքը»։ Կաշե օր ախպերը չկա, կըսե.

— Թագավոր, մե առակմ միտքս ընկավ, էդիկ պատմեմ, ետև վճիռը տամ։

— Ըսա,— կըսե,— ըսա իմանամ։

Կըսե.— Թագավորի մեկը ուներ մե սիրելի բյուլբյուլմ։ Իրեն խաս բախչան նստած վախտը, բյուլբյուլը հա կը թռնիր էս ծնկին, հա կը թռնիր ումուղին, հետը կը խաղար։ Հանկարծ բյուլբյուլը իրեն ծնկան վրայեն թռավ գնաց ծառներուն մեջը, ետ դարձավ էկավ նորեն թագավորի ծնկին իջավ։ Թագավորը հարցուց.— Ո՞ւր գնացիր, բյուլբյուլ։

Բյուլբյուլը ըսավ.— Քեռիս էկեր է, իրեն տղեն պիտի կարգե, ինձի հարսնիք կը կանչե, ինձի ըսավ. «Գնա թագավորեն իզին առ, օր քեզի հարսնիք տանիմ»։

— Է՞, բյուլբյուլ, հարսնիք օր էրթաս, ինձի ի՞նչ փեշքաշ պիտի բերես։

— Քեռիս ինչ օր տվեց, էնիկ կը բերեմ քեզի փեշքաշ։

— Գնա, իզին է,— ըսավ թագավորը։ Գնաց քեֆ էրավ, ետ դարձավ։

Էկավ քեռուն ըսավ.— Թագավորիս ի՞նչ պիտի տաս փեշքաշ։

Ըսավ.— Իսի իրեք կուտը տանիս կը թագավորիդ փեշքաշ, անմահական խնձորի կտներ են։ Եփոր քեզի կը հարցնե, թե էս կուտը ի՞նչ պիտի էնե, ըսա՝ իրեքն էլ թող տնկե, իրեք խնձորի ծառ կէղնի,

մեկ-մեկ հատ խնձոր կուտան, չը պիտի թողնին օր գետին ընկնի, օր քաղեն ուտեն՝ ջահելնան կը։

Էկավ բյուլբյուլը իջավ թագավորի ծնկին։ Բարով բյուլբյուլըս,— ըսավ թագավորը,— ինձի ի՞նչ բերիր ընծա։

Բյուլբյուլը բերնեն հանեց իրեք կուտը, գրեց թագավորի ծընկին, ըսավ.— Այսի իրեք կուտը քեռիս տվեց ըսավ. «Տնկեցեք, ամեն մեկը ծառմ կէղնի՝ մեկ-մեկ խնձոր կուտա, մուղաթ կեցեք, խնձորը հասնելու վախտը գետին չընկնի, քաղեցեք, ով օր ուտե ջահելնա կը, համա օր գետին ընկավ մարդ կը սրպանե»։

Թագավորի ուզածն էլ էդ էր՝ խնձորը ուտեր ջահելնար։

Կանչեց բաղպանճուն, տվեց իրեք կուտը. «Տնկե, եփոր պտուղ կուտա, զօր դիշեր քովեն չը հեռանաս»։

Բաղպանճին առավ, տարավ տնկեց. ծառ էղան, մեկ-մեկ խընձոր տվին։ Զօր գիշեր բաղպանճին քովեն չէր հեռանա, կսպասեր օր հասնի, դնե թապախի մեջ տանի թագավորին։ Աչքը խնձորներու վրա էր։ Հանկարծ մեկը ընկավ դետին, վեր թռավ բաղպանճին բրռնեց, դրեց թապախի մեջ, տարավ թագավորին։

Թագավորը ղրկեց չարսուեն մե ինձի պես[1], ետ ընկած ծերմ բերել տվեց, տվեց խնձորը ուտելու։ Կերավ խնձորը ուռավ ու պատռավ։

Թագավորը բարկացավ բյուլբյուլի վրա, ըսավ,— Վայ բյուլբյուլ, դու իմ կյանքիս թշնամին ես,— քաշեց վիզը կտրեց, թաբլեց դուրս։

Գնաց բաղպանճին. մեկել խնձորը հասնելուս կտրեց, բերեց տվեց թագավորին։

— Ա՜, բերիր, էդիկ էլ դու կեր,— ըսավ թագավորը։

Բաղպանճին կերավ, ջահելցավ, իգիթ տղեմ դառավ։

— Յա՛,— կըսե թագավորը,— էդ ինչե՞ն էր, օր էն առաջին խնձորը էն էխտիարին սրպանեց, էսիկ քեզի ջահելցուց։

— Էնիկ գետին ընկավ, վեր թռավ՝ ես բռնեցի՝ ըսի գետնի վրեն օր չը մնա, ես ըսի թե կարելի է մարդու չը վնասե, բայց էսիկ, ես ձեռքովս ծառեն կտրեցի, բերի քեզի, գուզես մեկելն էլ բերեմ դու կե։

— Գնա՛ բեր,— ըսավ թագավորը։ Բաղպանճին գնաց բերեց, թագավորը կերավ ջահելցավ, ծնկներուն զարկեց, գլխուն զարկեց թե. «Առանց քննության ես ինչի՞ քեզի սրպանեցի»։

Եթե դու էլ առանց քննության վնասես քու ծառայիդ, դու էլ պիտի փոշմընիս։

---

[1] Առաջի բացատրութիւնն է (Ս. Կ.)։

— Շնորհակալ եմ,— ըսավ թագավորը,— սիրտս ֆառայցավ, գնա հանգստացիր, ես էլ քիչմ հանգստանամ։

Գլոխը դրեց բարձին։ Քիչ անցավ, արշալույսը բացվավ։

Կանչեց ղարաուլներուն ըսավ.

— Գնացեք, իմ սիրելի ծառայիս կանչեցեք, հարցնեմ տեսնեմ, ինչի՞ էդպես բան էրավ։

Ծառաները գնացին ձեն տվին, առան էկան։

Թագավորն ըսավ.— Որդի էն ի՞նչ բան էր, օր թուրը սրբեիր կը, ինձի գուզեիր սրպանե՞լ։

— Արի, թագավո՛ր,— կըսե տղան,— քու թշնամիդ քու աչքովը տես։

Հանեց թագավորին չատրեն, բերեց վիշապը ցույց տվեց։

Թագավորը էկավ տեսավ օր մե ղոճա վիշապմ կտրեր էր, թափած էր։

Զարմացավ, հարցուց, ըսավ.— Ինչի՞ էն ժամանակը չըսիր։

Տղեն ըսավ.— Իրեք սըհաթ պտի չը խոսեի, թե օր խոսեի, մեծ վնաս կը պատահեր բոլորիս։

Շատ ուրախացավ թագավորը, իրեք ախպորեն էլ շնորհակալ էղավ. դարձան էկան քաղաք, նստան թախտը, կանչեց տղոցը հարցուց, թե ի՞նչ ունին իրեն ըսելու։

Տղեքը թագավորին խըսա էրին իրենց հոր կտակը ու ըսին թե.

— Էրկու անգին քարը խազնի մեջեն կորեր է, որիս քովն է պիտի դտնիս։

— Է՞, որդիք,— ըսավ թագավորը,— առակմ էլ ես ըսեմ ձեզի։ Ժամանակով աղքատ, ջահել տղեմ մե հարուստ իշխանիմ աղջկա վրա սեր քցեց։ Աղջիկը տղին գուզեր, տղեն աղջկան գուզեր։ Օրմ տղեն աղջկան ըսավ թե. «Մեր սերը զուր է, ես քյասիբ տղա, քու հերդ հարուստ, ինձի ե՞փ աղջիկ կուտա»։ Ըսավ ու աղջկանէն հեռեցավ։ Մոտիկ դեղեն իշխանի մեկը էկավ, էդ աղջկան իրան տղին ուզեց։ Հերը վերուց տվեց։ Քյասիբ տղեն իմացավ օր աղջիկը նշաներ են, էկավ աղջկա քովը, ըսավ.— Տեսա՞ր, ես չըսի, թե քու հերը ինձի աղջիկ չի տա, քեզի հիմի տվեր է իշխանի տղի։

Աղջիկը ըսավ.— Դու դարտ մի էնե, ես ուխտեմ կը օր առչի իրիկունը քովդ գամ, ետև էրթամ են իշխանի տղին կնիկ էդնիմ։

Հարսնիքը բռնեցին, աղջիկը տարան հարս, տղի գեղը։ Հարսնիքը պրծան, տղեն էկավ աղջկա քովը, աղջիկը սկսեց լալ։

— Ինչի՞ գուլաս,— հարցուց տղեն,— ինչուս չես հավնի։

— Ես մահանա չունիմ, միայն ես ուխտեր եմ աստծու առաջը,

որ ես սիրահարված էի, մեծ աղքատ տղի վրա, ուխտեր եմ, որ առաջ ինոր քովը պիտի էրթամ, ետև դամ քեզի կնիկ էղնիմ։

— Մի՛ լա, որ ուխտեր ես, իրիկունը ես քեզի ճամփեմ կը էնոր քովը, կեցի, առավոտուն արի։

Հրամայեց ծառաներուն որ ձի պատրաստեն, բերեց նշանածիս ըսավ.

— Հեծի դնա, իրիկունս էնոր քովը կեցի, առավոտը թեզով արի։

Աղջիկը ձին հեծավ գնաց։ Հարամիքը վրա տվին։ Տեսան որ պարդարված հարսմ, ուզեցան պոպկել։ Հարամի բաշին թուրը քաշեց, ըսավ.— Համբերեցեք, էստեղ բանմ կա, որ էսպես զարդարանքով մեծ աղջիկմ գիշերով հ՚ելել ճամփա կէրթա կը։

Հարցուց Հարամ բաշին թե.— Աղջիկս, էս ի՞նչ բան է, որ դու դիշեր ժամանակ մեննակ ճամփա կէրթաս կը, մի վախենա, ըսա։

Աղջիկն ըսավ թե.— Ես ուխտեր էի, որ առաջի գիշերը ես էրթայի իմ սիրահարիս քովը, որ առավոտուն գայի իմ նշանածիս էղնեի կնիկ։

Տեսա՞ք,— ըսավ Հարամ բաշին,— տեսա՞ք որ աստծու հետ ուխտ էնող աղջիկը իրան ուխտին կեցեր է, ինչպես կը դիպնիք էսպես աղջկանը։

Իրենք առաջ ընկան տարան էն տղի տունը։ Տղեն էլ, քունը չէր տարե, դռան առաջը կէրթար գուքար։

Տղեն տեսավ աղջկան, զարմացավ, ըսավ.— էս ի՞նչպես քու նշանածդ էսպես զարդարված քեզի ղրկեց իմ քովը։

— Ես սաստիկ լացի, ըսի թե էսպես ուխտ ունիմ, քեզի կնիկ չեմ էղնի տեյմոր էնոր քովը չէրթամ։

— Աղջի՛կ, որ ղու ուխտիդ ես կեցե, քու նշանածդ էլ քու ուխտդ չէ մերժե, ես էլ ուխտ կէնեմ, որ ես էլ քեզի էնպես մաքուր տանիմ իրեն թասլիմ էնեմ։— Ու ձիու գլամեն բռնեց, տարավ էն գեղը, դարպասը զարկեց. նշանածն էլ չէր քնե, էկավ բացեց, ըսավ.

— Դու վո՞վ ես։

Ըսավ.— Ես քու հավատարիմ ախպերդ եմ, ինչպես դու քու նշանածիդ անարատ իմ քովս ճամփեցիր, էնպես անարատ էլ ես ետ դարցուցի։ Էստեղ ետև դու իմ փեսես ես, էս էլ իմ քուրս է, իմ բերնիս սրբությունն է։

Իշխանի տղեն կրսե.— Դու որ էդ աղնվութենը էրիր, իմ նշանածս բերիր թասլիմ էրիր, ես էլ իմ քուրս քեզի կուտամ։

Էրավ իրան փեսա։

Արթղ հիմի թագավորը հարցնե կը տղոցը.

— Դուք օր էղնեիք, ի՞նչ կէնեիք։

Պզտիկը ըսավ.— Ես շատ հավնա էդոնց էրածին։

Օրթաննան ըսավ.— Ես էլ կը հավնիմ։

Մենձը ըսավ.— Ես օր էդնեի հարամոց տեղը, կը պոպկեի, կը տանեի, ինձի կնիկ կէնեի։

Ըսավ.— Էլա իսա դու շատ թամա ունիս, էդ ակները քու քովն է, գնա ակները տուր, քու թագավորությունդ վայելե։

Էրկնքեն իրեք ձենձոր իջավ։